



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
info@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն N ASBT05-1901-C (2412) «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 4-րդ գումարման Հոգաբարձուների խորհրդի նիստի	
Ամսաթիվ՝	24 դեկտեմբերի 2019 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11;
Նիստի սկիզբ՝	09:30
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ Հեռ անդամներ՝ Անահիտ Ադամյան Անահիտ Հովհաննիսյան Արիս Բերբերյան Հովհաննես Աթաբեկյան Ռուբեն Հարությունյան- միացել է առցանց Սարգիս Բադայան Վասկեն Յակուբյան Տիգրան Հարությունյան: Նիստին չեն մասնակցել՝ Արթուր Ալավերդյան Հակոբ Հակոբյան	
Նիստին մասնակցել են Հոգաբարձուների խորհրդի տասներկու անդամներից(երկու տեղը թափուր է) ութը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը: Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին Արամ Փախչանյանը (գործադիր տնօրեն), Դավիթ Սահակյանը (գործառնական տնօրեն) Նելլի Բալայանը (ֆինանսական համակարգող): Նիստի քարտուղար ընտրվեց՝ Սիրանուշ Սուքիասյանը:	

Հարց 1. (Հիւ նախագահի հիմնական պարտականությունները, Հիւ նիստերի վարման ձևավորված ընթացքը)

«Այբ» դպրոցի գործադիր տնօրեն Արամ Փախչանյանը ներկայացրեց Հիւ նախագահի հիմնական պարտականությունները (նիստերի օրակարգի մշակում՝ դպրոցի տնօրենության հետ համատեղ, նիստերի վարում և այլն), Հիւ նիստերի վարման ձևավորված ընթացքը, նախկին Հիւ-ի աշխատելաձևը:

Որոշվեց, որ նիստերը վարվելու և արձանագրվելու են միայն հայերեն:

Հիւ-ի անդամները ներկայացրեցին իրենց:

Հարց 2. (Հիւ նախագահի ընտրություն)

Արամ Փախչանյանն առաջարկեց ընտրել Հիւ-ի նախագահ:

Առաջարկ եղավ չդիտարկել Արթուր Զանիբեկյանի և Դավիթ Յանի թեկնածությունը որպես Հիւ նախագահ, քանի որ նրանց մասնակցությունը Հիւ-ի նիստերին չի կարող մշտապես ապահովվել:

Առաջարկվեցին հետևյալ թեկնածուները՝

Ռուբեն Հարությունյան

Սարգիս Բաղայան

Սարգիս Բաղայանը ներկայացրեց ինքնաբացարկ :

Որոշում հարց 2:

Հաստատել Ռուբեն Հարությունյանի թեկնածությունը որպես Հիւ-ի նախագահ:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 3. (Օրակարգի հաստատում)

Քանի որ Ռուբեն Հարությունյանը նիստին մասնակցում էր առցանց, իր որոշումով նիստը վարեց Արամ Փախչանյանը:

Արամ Փախչանյանը ներկայացրեց նիստի օրակարգը, իսկ Հիւ-ի անդամները հաստատեցին այն:

Որոշում հարց 3:

Հաստատել Հիւ-ի նիստի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի օրակարգը :

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 4. (Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն):

Արամ Փախչանյանն առաջարկեց օրակարգի վերջում ավելացնել հարց՝ 9-րդ դասարանի դիմորդի ընտանիքի դիմումի մասին:

Առաջարկը ընդունվեց:

Հարց 5 (Ուսումնական տարվա դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ):

Դպրոցի գործադիր տնօրեն Արամ Փախչանյանը ներկայացրեց ուսումնական տարվա դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ ըստ հավելված 1-ի:

Հիմնական թեմաները՝

- Առաջին կիսամյակը շատ խիտ էր միջոցառումների առումով՝ Aurora Prize, WCIT, RUSAL, Այբական խաղեր, «Միջազգային ծրագրավորման ժամ» և այլն
- Կիսամյակի ընթացքում դպրոցը հյուրընկալեց 20-ից ավելի պատվիրակություն- Ռուսաստան, Ղազախստան, Գերմանիա և այլն
- Facebook-ում դպրոցի Էջին բաժանորդագրումը ավելացել է 12,5%-ով անցած տարվա դեկտեմբերի համեմատ և անցել է 19.300-ը (2019 թ. դեկտեմբերի դրությամբ)
- Կատարվել է դպրոցի տարածքների բարելավումներ, այդ թվում՝ անվտանգության պահակակետի տեղափոխումը մուտքի մոտ, տեղափոխվել է դպրոցի տարածքի պարիսպը, առաջացած տարածքում կայանատեղի կառուցելու նպատակով:
- Հարկային ստուգման արդյունքում ակտ է կազմվել: Դպրոցը այդ ակտի հետ համաձայն չէ և գանգատարկելու է այդ ակտը:
- Դպրոցի հետևյալ ղեկավարները՝ Արամ Փախչանյանը, Մերի Հովսեփյանը և Դավիթ Սահակյանը, մասնացել են Արցախում տեղի ունեցած կրթության համաժողովին, որի արդյունքում նախատեսվում է սերտ համագործակցություն Արցախի Կրթության նախարարության հետ:
Հն անդամների կողմից առաջարկվեց PR թիմի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնել՝ շեշտելով «Այբ» դպրոցի բարեգործական կազմակերպություն լինելը, բարձրորակ կրթություն ապահովվելը և մարզերի դպրոցներում բազմաթիվ զարգացման ծրագրերում մասնակցությունը: Նշվեց, որ ԱԲ-ի թեկնածու դպրոցների հետ հունվարից ավելի սերտ համագործակցություն է սկսվելու:
Հարց 6 (Հաշվետվություն «Այբ» դպրոցի Աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ՝ ի հետևումն հնգամյա ռազմավարական պլանի իրականացմանը)
Դպրոցի գործադիր տնօրեն Արամ Փախչանյանը ներկայացրեց ռազմավարական պլանի կառուցվածքը: Նա խնդրեց որպես ի գիտություն ընդունել «Այբ» դպրոցի աշխատանքային պլանի առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունը՝ ի հետևումն հնգամյա ռազմավարական պլանի՝ ըստ հավելված 2-ի:
Հն-ի նախագահ Ռուբեն Հարությունյանը չի շարունակել իր մասնակցությունը նիստին:
Հարց 7 (2019-2020 թթ ուս. տարվա բյուջեի հաստատում)
Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) առաջարկեց ունենալ ֆինանսաբյուջետային հանձնաժողով, որպեսզի նման ծավալուն փաստաթղթեր նախապես քննարկել հանձնաժողովում մինչև Հն-ի մյուս անդամներին ներկայացնելը: Դավիթ Սահակյանը ներկայացրեց 2019-2020 թթ ուս. տարվա բյուջեն ըստ հավելված 3-ի:
Որոշում հարց 7: Որոշվեց հաստատել 2019-2020 թթ ուս. տարվա բյուջեն առցանց մինչև հունվարի 31-ը՝ ֆինանսաբյուջետային հանձնաժողովի դրական եզրակացության ստալու հիման վրա: Մինչև հունվարի 29-ին ուղարկել Հն-ի անդամներին բյուջեն հաստատման: Խնդրել ֆինանսաբյուջետային հանձնաժողովին ներկայացնել հակիրճ բացատրագիր բյուջեի կարևոր կետերի վերաբերյալ: Առաջադրանք տալ դպրոցին գտնել ծախսային մասը կրճատելու ուղիներ: Ձևավորել ֆինանսաբյուջետային հանձնաժողով՝ Անահիտ Ադամյան, Սարգիս Բաղայան և Տիգրան Հարությունյան կազմով:

Հանձնարարել հունվարի 31-ին Սիրանուշ Սուքիասյանին առցանց ստանալ բյուջեի հաստատումը, իսկ հաջորդ նիստին՝ բյուջեն հաստատել:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 8. (Աուդիտորական ընկերության ընտրություն):

Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) ներկայացրեց աուդիտորական ընկերության ընտրության սկզբունքները և կազմակերպություններն ըստ հավելված 4-ի :

Որոշում հարց 8:

Որոշվեց «Այբ» դպրոցի 2018-2019թթ. աուդիտի համար ընտրել «Քեյ-ՓԻ-ԷՄ-ԶԻ Արմենիա»-ն, դպրոցին լիազորություն տալ բանակցելու կազմակերպության հետ, որպեսզի երկու տարով պայմանագիր կնքվի ավելի ցածր գնով (առնվազն 5%-ով):

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 9. (ԱԲ ծրագրի համար դրամահավաք):

Արամ Փախչանյանը նշեց, որ Զեմբրիջին համալսարանին վճարվում է քննական տարբերակները կազմելու համար, բայց եթե դպրոցը կարողանա այս տարի ֆինանսավորել մասնագետների հավելյալ վերապատրաստումները, հաջորդ տարիներին ծախսը կնվազի մոտ երեք անգամ:

Որոշում հարց 9:

Որոշվեց ԱԲ քննական կենտրոնի ղեկավարների և «Այբ» դպրոցի և հիմնադրամի ՀԽ-ների հետ հանդիպում կազմակերպել: Առաջարկել ԱԲ-ի քննական կենտրոնի ղեկավարներին և գործընկեր կազմակերպությանը ներկայացնել «Այբ»-ի հետ համագործակցության զարգացման առաջարկ:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 10 (Դավիթ Սահակյանի անդամությունը ք. Էջմիածնի Էռնեստյանի անվան դպրոցի ՀԽ-ում):

Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) տեղեկացրեց , որ, նախքան «Այբ» դպրոցում աշխատելը, իրեն առաջարկել են անդամակցել ք. Էջմիածնի «Էռնեստյան հանրակրթական դպրոց»-ի ՀԽ-ին:

Որոշում հարց 10:

ՀԽ-ի կողմից առարկություն չկա Դավիթ Սահակյանի «Էռնեստյան հանրակրթական դպրոց»-ի ՀԽ-ի անդամ լինելուն:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 11. (Գործադիր տնօրենի աշխատանքային պայմանագրի ավարտը և դրա հետ կապված հետագա քայլերը):

Արամ Փախչանյանը ներկայացրեց իր աշխատանքի ավարտի մասին դիմում ըստ հավելված 5-ի :

Առաջարկվեց ընտրել հանձնաժողով, որը կգրառվի տնօրենի ընտրության հարցով:

Որոշում հարց 11:

Որոշվեց հաստատել դպրոցի տնօրենի թափուր տեղի համալրման հանձնաժողովի անդամներին՝ Անահիտ Ադամյան, Անահիտ Հովհաննիսյան, Արիս Բերբերյան, Հովհաննես Աթաբեկյան, Տիգրան Հարությունյան և Վասկեն Յակուբյան: Հանձնաժողովը մշակում է և, ներկայացնում է ՀԽ- ի հաջորդ նիստի հաստատմանը

դպրոցի տնօրենի ընտրության ընթացակազմի նախագիծը և իր առաջարկներն է անում հանձնաժողովի կազմի ընդլայնման մասին: Մինչ ընթացակարգի հաստատումը ոչ մի հանրային գործունեություն չի կատարվում: Այն որոշման մասին, որ Դպրոցը փնտրում է գործադիր տնօրեն, տեղեկացնել հանրությանը՝ «Այբ»-ի բարերարներին, ծնողներին, աշխատակիցներին և աշակերտներին:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 12. («Այբ» դպրոցի 2020-2021թ.-ի ընդունելության կարգ):

Դավիթ Սահակյանը (Գործառնական տնօրեն) ներկայացրեց ընդունելության կարգում առաջարկվող մի քանի փոփոխություն՝ «Այբ» դպրոցի 2020-2021թ.-ի բոլոր բաղադրիչների ընդունելությունը կազմակերպել համաձայն 2019-2020թ. «Այբ» դպրոցի ընդունելության կարգի:

Համաձայն «Այբ» դպրոցի 2019-2020 ուս.տարվա ընդունելության կարգի՝ 4-ից 5-րդ դասարան և 9-ից 10-րդ դասարան «Այբ» դպրոցի աշակերտների անցումն իրականացվում է ներքին ընդունելությամբ: Ներքին ընդունելության գործընթացի շրջանակներում առաջին կիսամյակի ավարտին՝ հունվարին, յուրաքանչյուր աշակերտի համար կազմվում է անհատական հաշվետվություն, որը հաստատվում է ՄԽ-ի կողմից, ապա տրամադրվում ծնողներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցն այս պահին չունի ՄԽ, մինչ ՄԽ-ի կազմավորումը՝ լիազորել տնօրենի հրամանով ստեղծված աշխատանքային խմբին իրականացնելու այդ գործառույթը:

ՄԽ-ի գործունեության կարգը ներկայացվելու է հաստատման ՀԽ-ի հաջորդ նիստին: Ներկայացնող՝ Դավիթ Սահակյան

Որոշում հարց 12:

Որոշվեց հաստատել վերոգրյալ փոփոխությունները:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 13. (Հաջորդ տարվա նիստերի օրերը):

Արամ Փախչանյանը ներկայացրեց հաջորդ տարվա նիստերի նախատեսվող օրերն ըստ հավելված 6-ի:

Որոշում հարց 13:

Որոշվեց հաջորդ տարվա նիստերը սահմանել մարտի 17-ին, հուլիսի 3-ին, սեպտեմբերի 8-ին և դեկտեմբերի 15-ին ժամը 16:00:

Որոշումը կայացված է միաձայն:

Այս որոշումը ներկայացնել ՀԽ-ի բացակա անդամներին և նախատեսել հնարավոր փոփոխություն՝ ելնելով իրենց արձագանքից:

Հարց 14. (ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր):

1. Ռազմավարություն: Ներկայացնող՝ Արամ Փախչանյան
2. PR ռազմավարություն: Ներկայացնող՝ Աննա Հակոբյան
3. Տնօրենի ընտրության ընթացիկ կարգավիճակը: Ներկայացնող՝ հանձնաժողովի ներկայացուցիչ

Հարց 15. (9-րդ դասարանի դիմորդի ընտանիքի դիմումի մասին):

Ներկայացվեց, որ մի ընտանիք պատրաստվում է տեղափոխվել Հայաստան, երկու երեխաները դիմելու են «Այբ» դպրոց, մի երեխան՝ 8-րդ դասարան, մյուսը՝ 9-րդ դասարան: Քանի որ 9-րդ դասարանում ընդունելություն չի կազմակերպվում, ծնողները դիմել են խնդրանքով թույլ տալ իրենց որդուն քննություններ հանձնել և փորձել

ընդունվել 9-րդ դասարան:

Որոշում հարց 15:

Որոշվեց ընդունելության կարգում փոփոխություն կատարել, ըստ որի 4-րդ և 9-րդ դասարաններում կկազմակերպվի թափուր տեղերի համալրման ընդունելություն՝ ավելի խիստ չափանիշներով: Այդ չափանիշների շուրջ որոշումը թողնված է Ընդունելության հանձնաժողովի հայեցողությանը:

Որոշումը կայացված է միաձայն:

Անահիտ Ադամյանը չի մասնակցել հարցի քննարկմանը:

Որոշման մասին տեղեկացնել Ընդունող հանձնաժողովին: Պատասխանատու՝ Սիրանուշ Սուքիասյան

Հարց 16. (Նիստի ավարտ):

Հանդիպումն ավարտվեց ժամը 13:30-ին:

Հիւ անդամներ՝

Անահիտ Ադամյան _____

Անահիտ Հովհաննիսյան _____

Արիս Բերբերյան _____

Հովհաննես Աթաբեկյան _____

Ռուբեն Հարությունյան _____

Սարգիս Բադալյան _____

Վասկեն Յակուբյան _____

Տիգրան Հարությունյան _____

Նիստի քարտուղար՝ Սիրանուշ Սուքիասյան _____